
ՏԱՆՆ ԱՃԵՑՐԱԾ ԲԵՐՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՀՐԴԵՀԻՑ ՀԵՏՈ

Ուղղորդումներ անհատների համար

Անտառային հրդեհից հետո ծուխը և մոխիրը կարող են ազդել ձեր տանը աճեցրած մրգերի և բանջարեղենի վրա: Այս պարզ ուղղորդումները կօգնեն ձեզ ստուգել՝ արդյոք ձեր բերքն աղտոտված է, և կօգնեն տեղեկությունների վրա հիմնված որոշումներ կայացնել այն մասին, թե արդյոք լավ է դրանք հավաքելը և ուտելը:

Եթե կասկածում եք, դեն նետեք:



Նախքան տան այգում աճեցրած բերքն օգտագործելը կամ ուտելը


Հրդեհի ծուխը կարող է տարածել **ախտահարող նյութեր**, որոնք կան մոխրի մեջ և այրված բնական կամ մարդու կողմից ստեղծված նյութերում: Այգին մոխրից մաքրելիս կրեք անձնական պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք են N95 շնչադիմակները (ռեսպիրատոր), ռետինե ձեռնոցները և ճթքավոր կոշիկները, երկարաթև վերնաշապիկները և տաբատները:

Տարածված ախտահարող նյութերից են՝

- **Ածխաջրածիններ,** ինչպիսիք են ճանապարհներին, ավտոտնակներում կամ ավտոարդյունաբերությունում եղած նավթամթերքները:
- **Ծանր մետաղներ,** ինչպիսիք են կապարը, կադմիումը, նիկելը և մկնդեղը, որոնք լինում են մետաղներում, հին շենքերի ներկերում ու խողովակաշարերում, էլեկտրական իրերում, մարտկոցներում և մի շարք արդյունաբերական գործընթացներում:
- **Քիմիական նյութեր**, որոնք լինում են գյուղատնտեսական միջավայրերում և բնության մեջ, մեքենաներում և սարքավորումներում:
- **Վտանգավոր նյութեր**, որոնք օգտագործվում կամ պահվում են հրդեհի տարածքում գտնվող արդյունաբերական վայրերում և շենքերում:

Այն տարածքների համար, որոնք մեծապես ծածկված են մոխրով

Եթե բերքն ամբողջությամբ ծածկված է մոխրով, նետեք այն **բակի աղբարկղը**:



Բերքը մանրակրկիտ լվանալը կարող է օգնել նվազեցնել մակերեսի ախտահարիչները, բայց դա չի հեռացնի թունավոր նյութերը, որոնք կարող են ներծծված լինել մեջ:

Եթե կասկածում եք, դեն նետեք:

Նախքան տուն մտնելը հանեք կոշիկները և հագեք մաքուր հագուստ: Ծխով պատած հագուստը դրեք տոպրակի մեջ՝ ձեր տուն մոխիր չբերելու համար, և հնարավորինս շուտ լվացեք դրանք առանձին, որպեսզի խուսափեք խաչաձև ախտահարումից:



Խուսափեք այգում աշխատելուց, երբ օդի որակի ինդեքսը (AQI) անվտանգ չէ


Անտառային հրդեհներն առաջացնում են մեծ քանակությամբ մոխրի մասնիկներ և մեծ կտորներ, որոնք երկար տարածություններ են անցնում և առողջության համար վտանգավոր են: Նախազգուշական միջոցներ ձեռնարկեք, եթե ծխի հոտ եք առնում կամ մոխիր եք տեսնում:

Պարզեք ձեր տարածքի օդի որակն այստեղ՝ **https://bit.ly/42iDA40**
Մանրամասների համար այցելեք **https://www.aqmd.gov/smokesafety**:

Այն տարածքների համար, որոնք վնասվել են քամու բերած մոխրից

Լավագույն գործողություններ՝ ձեր այգու բերքը ստուգելու համար, երբ օդի որակն անվտանգ է

- Ստուգեք՝ արդյոք մոխիր կա հողի վերին շերտում, բույսերի և ծառերի վրա:
- Նախապես **դրսում** լվացեք ձեր բերքը ցնցուղի կամ դույլի մաքուր ջրով, որպեսզի հեռացնեք հողը և մոխիրը:
- Մանրակրկիտ լվացեք ձեռքերը նախքան բերքի հետ ներսում աշխատելը:
- Հեռացրեք հազարի կամ տերևավոր բույսերի արտաքին տերևները:
- Լավ լվացեք և տրորեք բերքը հոսող սառը ջրի տակ. կեղվեք պատրաստելուց կամ մատուցելուց առաջ:
- Խորը երակներով բույսերը, օրինակ՝ կաղամբը, և խավոտ մրգերը, օրինակ՝ դեղձը, թրջեք 10% սպիտակ քացախի լուծույթում՝ հողի մասնիկները հեռացնելու համար:
- Խուսափեք հողի տակ աճող մշակաբույսերից, ինչպիսիք են գազարը կամ կարտոֆիլը, քանի որ դրանք ավելի շատ են կլանում ախտահարիչներ:
- Խուսափեք աղտոտված հողում մշակաբույսեր տնկելուց:
- Ծառերի պտուղները, որոնք պատշաճ կերպով են լվացված, անվտանգ են ուտելու համար:



Եթե տարածքը շատ չի ծածկված մոխրով, օգտագործեք հողը մաքրող նյութեր

Ձեր հողին պարարտանյութ, գոմաղբ և տորֆ ավելացնելը կարող է նվազեցնել ախտահարիչների ներթափանցումը բերքի մեջ: Դատարկ հողը փայտի տաշեղներով, խոտի կտորներով, պարարտանյութով և ավելի մաքուր հողով ծածկելը կարող է նվազեցնել ախտահարիչների ազդեցությունը: **Մի** օգտագործեք մոխիրը որպես պարարտանյութ/ հողը բարելավող միջոց ձեր բակի կամ այգու համար:

Այս ուղղորդումների մասին հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել Շրջակա Միջավայրի և Առողջության բաժնի հետ՝
ehmail@ph.lacounty.gov կամ **(888) 700-9995:**
Armenian [1/22/2025]

County of Los Angeles Public Health